



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ ԺԳ. 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.


ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1905

ԹԻՒ 2

ՃԸԿԸՐՆԱԹԻ ԿԱՌԻՐ  
Այս միևնոյն կառքին պատկերը դրած ենք քանի մը ամիս առաջ ան շարժ վիճակի մէջ, և հիմա կը տեսնենք զանիկա որ թափօր կը պտրտցուի: Ճըկըրնաթ կուռքը կը տեսնուի

Փողոցը ինչպէս լեցուած է մարդոց բազմութիւնով: Զարմանալի է որ այս պիտի յիմարական անապայտութիւն մը կրնայ շարունակել այսքան ժամանակ եւ սակայն շատ մարդիկ կը փարին այն կրօնքին որուն մէջ ծնած են, և

կը թողու Հնդկաստանի բոլոր ցեղերը իրենց կրօնքներուն հետեւիլ, սակայն կուռքին պաշտամունքին մէջէն վերցուած են սարսափելի բաներէն մէկ քանին: Բրիտանական իշխանութենէն առաջ շատ անգամ կը տեսնուէր որ մարդիկ կ'իյնային մօտեցող կառքին առջև, և անոր անիւներուն ներքև ճմրուելով կը մեռնէին, խորհելով թէ այդ կերպով կը քաւէին իրենց մեղքերը: Այս և անձը չարչարելու ուրիշ շատ ձևեր արգելուած են հիմա: Հեթանոս քուրմերը դիտեն թէ եթէ այսպիսի բաները չվերնան, կուռքին թափօրը պիտի արգելուի: Այսպիսի արտաքին չափազանցութիւններ կրնան արգելուիլ օրէնքով, բայց միայն Աստուծոյ շնորհքը կարող է փոխել մարդոց սիրտերը և առաջնորդել զանոնք հաւատքի և ճշմարիտ կրօնքին:



աշտարակին կեդրոնը, և բոլի կը նմանի իր բոլորակ աչքերով: Գրեթէ բոլոր կուռքերը կը ներկայացուին սոսկալի երեսներով, և ան ու սարսափ կու տան իրենց երկրպագողներուն: Գաղափարը Աստուծոյ մը որ նաև սիրող Հայր ըլլայ իր մարդկային զաւակներուն, հեռու է հեթանոսներուն միտքերէն:

նիկա որչափ նուաստացուցիչ ալ ըլլայ՝ Որչափ շնորհակալ ըլլանք քիչ է որ մենք մեր մանկութենէն սորված ենք հաւատալ միակ ճշմարիտ Աստուծոյն, և անոր Որդւոյն Յիսուս Բրիտանոսի, որ աշխարհի փրկիչն է: Թէև ճըկըրնաթի պաշտամունքը կը շարունակէ և Բրիտանական կառավարութիւնը կատարելապէս ազատ

ՆԵՐԿՐԻՆ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԻ  
Այսօր Ռուսիոյ և չափոնի ամէնէն հարուստ և ամէնէն ազնուատոհմ կիւները կարմիր խաչի հիւանդապահի զգեստ կը հագնին, և քով քովի կ'աշխատին ամէնէն խոնարհ դասակարգէ եղող կիներու հետ պատերազմի գացած զինուորներուն օգնելու գործով: Ազնուատոհմ կիներուն մէջ, որոնք գրեթէ գիշեր ցերեկ կ'աշխատին կարմիր խաչի պաշտօնեաներուն հետ, կը գտնուի Ռուսիոյ վլատիմիր Մեծ դքսուհին: Անիկա Ռուսիոյ կարմիր խաչի գործին գլուխը կը կենայ, և իր գրեթէ ամբողջ ժամանակը կը նուիրէ ժողովներու ներկայ գտնուելու, և ուրիշ կերպերով յառաջ տանելու կարմիր խաչի գործը: Ներկայ կը գտնուի պազաքներու մէջ, և կը կարէ զինուորներուն համար կար կարող տիկիներուն հետ, և կ'այցելէ աղջկանց դպրոցները, ուր աշակերտներուն կ'օգնէ ծուսա (թիֆթիկ) և վիրակապեր




նեցայ գործի համար: Կէսօրին հասայ հոն: Կառքս կանգ առած էր մանկօ ծառի մը ներքև գլխաւոր հրապարակին մէջ. և ես ճամբայ ելլելու վրայ էի գեղին կառավարչին բնակարանն երթալու համար: Եւ ահա յանկարծ վիթխարի սև փիղ մը վազելով իմ կողմն եկաւ կռատունէն որ ճիշդ մեր դիմաց կ'իյնար: Մեր առջև եկաւ, և տակաւին խելքս գլուխս չեկած զիս վեր առաւ, գրաւ իր պարանոցին վրայ, և սաստիկ արագութեամբ դէպ ի կռատուն վազեց: Չիս առաջին որմափակէն անցուց, որուն մէջ մեծ հոր մը կար լողանալու համար, և ուղղակի տարաւ փիղերուն տեղը: Հոն զիս գետինը դրաւ իր ընկեր փիղերուն մէջտեղը: Անիկա մուրացիկ փիղն էր: Չիս ճանչցած էր: Կարճ աղաղակներ հանեց, վերցնելով իր պատիճը և շարժելով ականջները, զոր անոր բարեկամները անտարակոյս հասկցան թէ ինձի պատիւ ընելու համար ըրաւ: Եւ երբ կառավարիչը տաճարին քուրմերը իր ետևը ձգած եկաւ այս տարօրինակ ցոյցին պատճառը հասկնալու, անոնք զիս հանդարտած և ապշութիւնս անցած գտան այս հսկայ գազաններուն մէջ, որոնք մեծարանք կ'ընէին ինձի:

«Ասիկա շատ նշանաւոր բան է», ըսաւ քուրմերէն մէկը, «երբեք տեսած չէի ասոնց այսպէս բարեկամօրէն վարուած ըլլալը ուէ մէկուն հետ»: Պատմեցի անոր թէ պարզեւներ կու տայի մուրացիկ փիղին: «Ուրեմն չեմ գորմանար», պատասխանեց: «Այդ փիղը այդ բանը պատմած է բոլոր խումբին, և անոնք ձեզի այս յարգանքները կը մատուցանեն յուսարով թէ նոյն վարձատրութիւնը իրենք ալ պիտի ընդունին»: «Կարելի՞ բան է այդ», ըսի զարմացած: «Կատարելապէս վատահ եմ ատոր: Կ'ուզէ՞ք ապացոյցը տեսնել: Չեւքերնիդ ձեր բարեկամ փիղին պատիճին բոլորտիքը դարձուցէք, և նշաններով հասկցուցէք անոր թէ կ'ուզէք որ ձեզի հետ գայ: Միւսները ամէնն ալ պիտի հետևին անոր: Թոյլ տուր որ ձեզ առաջնորդեն, և պիտի տեսնէք թէ ո՛ւր պիտի տանին ձեզ», պատասխանեց:

Ըսածին պէս ըրի. մուրացիկ փիղը և ես առջևէ գացինք. միւս ինը մեզի հետևեցան գոհունակութեան ձայներ հանելով իրենց մէջ: Անցանք կռատան դրան մէջէն, և անոնք զիս տարին ուղղակի բնիկ հացագործի մը խա-

նութը: Ես բողբոլիին պիտի ապչէի, եթէ արդէն չգիտնայի այդ կենդանիներուն զարմանալի մտացիութիւնը: Խանութիին առջև դիւրաւ հասկցայ պարտականութիւնս, ուստի անոնց ա մէն մէկուն նուիրեցի նկանակ մը հաց պատուական ռուփով ծածկուած, գորշատ կը սիրեն անոնք:

Քուրմը, որուն հետ արդէն խօսած էի, ըսաւ ինձի թէ ժամանակ ժամանակ այդ մուրացիկ փիղը իր ընկերներուն քովէն կը փախչի և կը մուրայ իր հաշուին: Կատարելապէս գիտնալով շուկան ուր կը ստանայ ուտելիքները, կ'երթայ հոն իր հաւաքած ստակը կը դնէ պողպատաճառին սեղանին վրայ, և կ'ուտէ այնքան անանաս, պանանաս, մանկօ և շաքարեղէց որքան Հնդիկ խանութպանը կու տայ ստակին փոխարէն:



ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱՐԱՆ ՄԸ  
Գիտնականներուն եռանդը երբեմն գաղտնիք է հասարակ ժողովրդին համար: Ժամանակի վատնում կը համարին անոնք երբ Գերմանացի մը կամ Գաղղիացի մը կը յօժարի երթալ շատ հեռաւոր երկիրներ, գտնելու համար նոր տեսակ բոյսեր կամ միջատներ: Օտար բոյսեր կամ միջատներ ոչ կ'ուտուն, ոչ ալ օգտակար նպատակի մը կը ծառայեն: Մեծ ծախքեր և երկար ճամբորդութիւններ ընել լոկ աւելի լիովին գիտնալու համար ինչ որ կը պարունակէ աշխարհս, յիմարութիւն է հասարակ ժողովրդէն շատին համար:

Եւ սակայն գիտնականներուն եռանդը այնչափ շատեր զգացած չէին հիմակումն չափ, և կառավարութիւնները նիւթապէս կ'օգնեն այս հետազօտութիւններուն: Աղէկ է ճանչնալ, որչափ կարելի է կատարեալ կերպով, աշխարհս և տիեզերքը որուն մէջ կը բնակինք մենք: Որքան աւելի գիտնանք Արարչագործութեան բազմազանութիւնը և սքանչելիքները, այնքան աւելի պատճառ կը տեսնենք Արարիչը փառաբանելու: Եւ երբեմն

անակնկալ գործնական արժէք մը կայ նոր գիւտի մը մէջ:

Հետազօտութեան ձևերէն մին, որոնց կ'օգնեն կառավարութիւնները, խաւարումներուն ուսումնասիրութիւններն են: Երբ ասոնք աշխարհիս հեռաւոր կողմերը տեղի կ'ունենան, բաւական մեծ ծախք կ'ըլլայ վիթխարի հեռադիտակներ և ուրիշ գործիքներ զրկելու համար զանոնք զննելու նպատակով: Հոս տեսնուած չէնքը դիտարան մըն է Մարիչըս կղզիին մէջ, որ թէպէտ Բրիտանական Պետութեան կը պատկանի, բայց շատ հեռի է Անգլիայէ: Բրիտանացի աստղագէտներ այս դիտարանէն արեւին խաւարումը զննեցին 1900ին:

ՄԱՐԴՈՒՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
(Երկուրորդ Պշջըր)

Երբ քեզի կը պատմուին մանկութեանդ մէջ կրած փորձանքներդ, և թէ ինչպէս քալել սորվեցար անթիւ գլորումներով և շատ անկումներով. կամ եթէ դաստիարակուել կը փափաքիս, դժուար դասեր կը սերտես, և չլիթած ես աղքատութեան պատճառաւ. կամ եթէ երիտասարդ ես գործի ասպարէզը նոր մտած, և կը մաքառիս դժուարութիւններու դէմ ապրուստդ ճարելու համար, և կամ մէկուն հետ կը մրցիս այն ինչ գիրքը գրաւելու համար, կեանքը անողք իրականութիւն կը թուի քեզի: Տարակոյս չունիմ թէ երիտասարդներէն շատեր փորձառու են այս իրողութեան, բայց գուցէ կը գտնուին այնպիսիներ, որ ասիկա տակաւին կատարելապէս չեն ընդունիր իրրեօրէնք:

Կրնաս միտքդ դնել թէ կեանքը պայքար մը պիտի ըլլայ քեզի: Կրնաս դժուար դասերը թողուլ առանց հասկնալու, և արհեստդ կամ պաշտօնդ թողուլ առանց անոր տէրն ըլլալու, թողուլ կեանքին բեռերը առանց անոնց դպչելու: Բայց չես կրնար միշտ ապաւինիլ հօրդ կամ մօրդ: Անոնք կը ծերանան, և եթէ քեզի ժառանգութիւն թողուն հարստութիւն մը և պատուաւոր անուն մը, չեն կրնար ժառանգ ընել քեզ կորովին և աշխատասիրութեան և յարատեւութեան որոնցմով պիտի պահուին այդ ժառանգութիւնները:

Այսօր աշխարհիս մէջ կան երկու դասակարգ միայն: Երկուքն ալ կ'աշխատին: Բայց առաջինը կ'աշխատի առնաբար, կեանքն սկսած ժամանակը, և անոր կը տիրանայ: Առաջին գասակարգէն են Գաւիթները: Անոնք ման-


կութեան և երիտասարդութեան մէջ գետին կը տապալեն հակները որոնք կը հակառակին ուսման, գիտութեան և գործի մէջ իրենց յառաջդիմութեան: Երկրորդ դասակարգն են Եսասները, որոնք իրենց անդրանկութիւնը կը ծախեն պնակ մը ոսպէ ապուրի համար, և այնուհետև ծառայութեան կը մասնաւոր իրենց մնացած ամբողջ կեանքերուն մէջ:

Երբ դեռահասները իրենցմէ աւելի տարիքոտներուն առջև կը պարզեն ոչ թէ իրենց փայլունութիւնը, ոչ թէ իրենց ժառանգած անունը կամ հարստութիւնը, այլ թէ ինչպէս կը նկատեն իրենց վարած կեանքը, թէ զանիկա լոկ իբրև արձակուրդի և զուարճութեան ժամանակամիջոց կը նկատեն զոր պիտի անցնեն ուրախութեամբ և խաղերով, թէ ձեռք պիտի առնեն իրենց ամէնօրեայ գործերը ամենայն աշխուժի և կորովով, մարգարէի պէտք չկայ ըսելու համար թէ անոնք հասնին ի վեր կ'ելլեն թէ վար կը սահին: Երբեմն կը պատահի որ հարուստներուն որդիները, որոնք իրենց հայրերուն պատեհութիւններուն տասնապատիկը ունին — հարստութիւն, դաստիարակութիւն, գիրք գործի մէջ և ընկերութեան մէջ, զորոնք իրենց հայրերը երբեք չեն վայելած — իրենց հայրերէն շատ կը հեռանան օգտակար ըլլալու կողմանէ, և շատ ետ կը մնան անոնցմէ: Նոյն իսկ իրենց վայելած առաւելութիւնները և բացառիկ միջոցները շատ անգամ իրենց կուրնալուն պատճառ կ'ըլլան, այնպէս որ չտեսնեն կեանքին անողորմ իրականութիւնները, և կարող չըլլալով հասկնալ աշխատութեան օրէնքը, ամէն բանի մէջ անյաջող կ'ելլեն:

Հարուստի մը որդի օր մը ցաւով ըսաւ թէ չկրնար կատարել իր գործերը այնպէս ինչպէս աղքատի զաւակները կրնան: Ըսաւ անդիտակից հանճարով մը, «Գրպանիս մէջ ստակ պիտի ունենայի հիմա, եթէ աղքատ ծնած ըլլայի»: Սնոր այս խօսքը արժանի է առակ մը ըլլալու, վասն զի խորին ճշմարտութիւն մը կը պարունակէ: Աղքատիկ տղաք յաճախ աշխարհիս ամէնէն մեծ բարեբարները կ'ըլլան:

Վաստէրպիլթ հայր, Սթիւըրթ և ֆիպտի, մեր լինըրները, Ուայինկթըրները և կրանթները կեանքն սկզբան արտաքին շատ քիչ առաւելութիւններով: Բայց իրենց նոյն իսկ դժուարութիւններէն հասկցան մա-

քառելու հարկը, և ձեռք առնելով կեանքի այս կեդրոնական օրէնքը, յաղթանակ կանգնեցին խոչընդոտներուն դէմ:



ԿԵՏ ԶԿԱՆ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Ճերմակ կէտ ձուկը ինչպէս իր մտին համար նաև ճարպին համար որսալու կենդանիներուն մէջ ամէնէն ընտիրն է: Ճարտար և եռանդուն որսորդը երբ առաջին անգամ կը տեսնէ սառին վրայ բացուածք մը ուրկէ կը շնչէ կէտը, սառնալեռներէն սովորաբար հինգ կամ աւելի մղոն հեռու, տուն կը վազէ և կ'աւետէ տան մէջ գտնուողներուն: Իսկոյն մեծ աղմուկ մը կ'ելլէ: Բալիսիրները կը պատրաստուին, և ընտանիքին մայրը ու բոլոր մեծ անդամները սառերուն վրայէն կը վազեն սառին բացուածքը ուրկէ շնչած էր կէտը: Երբ հոն կը հասնին, երկաթ ճանկեր և հրացաններ կը գործածեն զարնելու և բռնելու համար որսը: Տասներկու, տասներկու վայրկեանը անգամ մը կէտերուն խուճր վեր կ'ելլէ շնչելու համար, և բացուածքին երկայնութեամբ լողալով կ'երթայ կու գայ: Շնչող կէտը իբր երկու վայրկեան միայն կը մնայ ջուրէն վեր: Շատ անգամ, երբ շատ երկար ժամանակ ջուրէն վեր կը մնայ, սառին բացուածքը կը լեցուի կէտին մարմնէն, որուն երկու երրորդը ջուրէն դուրս կը բարձրանայ, և այս դիրքով կը մնայ բաւական ժամանակ, քնիկները այս պատեհութիւններուն կը սպասեն, և նշան կ'առնեն կէտին դանկոսկրին ճիշդ ետևի կողմին մէկ տեղին: Այս կերպով սպաննուած բոլոր կէտերը կը տարուբերին ջուրին երեսը, և անմիջապէս սառին վրայ կը քաշուին, և կամ քաչկուտուելով կամ բալիսիրի մէջ գրուելով կը տարուին դէպի ծովը: Գործը կը կրկնուի, և երբեմն բազմաթիւ կէտեր կը բռնուին և տեղ մը կը պահուին ապագային մէջ գործածուելու համար: Հրէշներէն մէկը ծովըրը բերել մեծ աշխատութիւն է, և ասոր կը մասնակցին թէ՛ ծերեր թէ՛ դեռահասներ:

Ուրբա կոչուած ծովային կենդանիին միտք շատ պատուաւոր է Ալաքայի ծովագործը բնակողներուն համար: Հացկերով մը կատարեալ նկատուիր առանց Ուրբսի գլխուն, որ կենդանիին ամէնէն համար մասը կը հասարակի: Տան պատուաւոր որդին այն է որուն վրանին մօտենալը կը տեսնուի իր կռնակը Ուրբսի գլխով մը:

“ԵՅԻ ԻՆՏԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՐ”  
Տղայ մը որ չափազանց կ'աճապարէ արդիւնքներ ձեռք բերել, չուզեր անոնց տանող երկար և բլուրն ի վեր ելլող ճամբէն երթալ, այլ կը ջանայ կարճ ճամբայ մը գտնել ուրիշներու ուղեղները գործածելով, երևելի դպրոցի մը ուսուցիչը կը պատմէ ուրիշ տեսակ պատանիի մը վրայ որ յաջողեցաւ շատ տարբեր կերպով մը: Ահա անոր պատմութիւնը:

Կը ճանչնայի տղայ մը որ Նիւ Եորք Համալսարանի ճիւղերը կարգը մանելու կը պատրաստուէր, եռանկունաչափութիւն կ'ուսանէր, և ես անոր երեք խնդիր տուի դասին համար: Յաջորդ օրը սենեակս եկաւ խնդիրները ապացուցանելու: Անոնցմէ երկուքը հասկցած էր, բայց երրորդը — շատ դժուար խնդիր մը — լուծած չէր: Ես ըսի իրեն թէ օգնե՛մ իրեն: «Ոչ, տէր. ես կրնամ և պիտի լուծեմ զանիկա եթէ ինձի ժամանակ տաք:» Ըսի իրեն թէ պիտի տամ ուզածին չափ ժամանակ: Յաջորդ օրը սենեակս եկաւ նոյն ուսման վերաբերեալ ուրիշ դաս մը արտասանելու: «Եհ, Սիմոն, աշխատեցար այն խնդրին վրայ, և լուծեցի՞ր զանիկա:» «Ոչ, տէր:» պատասխանեց: «Բայց պիտի աշխատիմ եթէ քիչ մը աւելի ժամանակ ալ տաք:» «Անտարակոյս. ուղարկի՛ր չափ ժամանակ քեզի:»

Ես միշտ կը հաւնիմ այն տղոց որոնք կ'որոշեն իրենց գործն իրենք ընել, վասն զի անոնք պիտի ըլլան մեր ամէնէն ընտիր ուսումնականները և մարդիկը: Երրորդ առաւօտուն Սիմոն տեսնուեցաւ որ սենեակս մտաւ, և հասկցայ թէ լուծած էր խնդիրը, վասն զի անոր ամբողջ դէմքին վրայ կը կարդացուէր յաջողութեան պատմութիւնը: Այո, լուծած էր խնդիրը, թէպէտ շատ ժամեր սաստիկ աշխատելով: Ոչ միայն լուծած էր խնդիրը, այլ, որ շատ աւելի մեծ կարևորութիւն ունէր իրեն համար, սկսած էր իր մէջ զարգացնել մաթեմատիքական կարողութիւն, զոր իր «Ես կրնամ և պիտի լուծեմ» խօսքին ներշնչման ներքև շարունակած է, մինչև որ այսօր եղած է մաթեմատիքի փրփէտոր մեր ամէնէն մեծ Գոլճներէն մէկուն մէջ, և մեր օրերուն ամէնէն կարող մաթեմատիքոսներէն մէկը իր երկրին մէջ:

Տրտեղան բաժանորդագիր՝ 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտիոնարայ Ընկերութեան կողմէն Արտօնապետ ձ. Բ. Կրիտ Տնօրէն—Պարագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԹՅՈՒՆ  
Ի ՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈՒ ԳՕՅԱԶԵՆ  
Ձեռնարկը Եղուշու, Ամերիկան իսան